



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏՈՒՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան շաբաթասկիզբին մեկնեցաւ Լիբանան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի յարկին տակ մասնակցելու համար շարք մը ժողովներու, հանդիպումներու եւ Ս. Պատարագի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին բարձր հովանաւորութեամբ, տեղի ունեցան Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովներու նիստերը:

Ժողովներուն ընթացքին, ներկայացուեցան թեմական աշխատանքներու մասին զեկուցումներ, քննարկուեցան Թեմերու եւ Կաթողիկոսութեան միջեւ գործակցութեան դաշտերն ու զանոնք աւելի եւս տարածելու միջոցները, միշտ նկատի ունենալով մեր ժողովուրդի հոգեմտաւոր կարիքները:

Նշենք, որ Առաջնորդ Սրբազանին կողքին, ժողովներուն մասնակցեցաւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի՝ Տիկին Ռիմա Պողոսեան:

### PRELATE IN LEBANON TO PARTICIPATE IN MEETINGS AT THE CATHOLICOSATE

By the invitation of H.H. Catholicos Aram I, last weekend H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Lebanon to participate in a meeting of Prelates and Diocesan lay representatives at the Catholicosate of Cilicia in Antelias.

The Prelates and representatives are discussing the vision of being the Armenian Church in the 21<sup>st</sup> century and the impact of geopolitics on the life of the Armenian nation.

At the end of the General Meeting, members of the Religious Council, the Executive Council, and the National Assembly of the Catholicosate will meet to set priorities and an action plan for implementation by the dioceses.

\*\*\*

## **Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ**

Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան հերթական Ս. Պատարագը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 6 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Կրօնական Ժողովի ատենապետ եւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

### **DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL**

On Saturday, November 6<sup>th</sup>, Divine Liturgy will be celebrated at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel. The service begins at 6:00 p.m.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate Divine Liturgy and deliver the sermon.

\*\*\*

### **Յ.Ս.Ը.Մ.-Ի ՆՈՐ ԿԵԴՐՈՆԻ ՍՐԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 31 Յոկտեմբերին, կ.ե. ժամը 2-ին, տեղի պիտի ունենայ Յ.Ս.Ը.Մ.-ի նոր կեդրոնի «Գեորգ Անտոնեան» սրահին պաշտօնական անուանակոչութեան արարողութիւնը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ արարողութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքը:

Արարողութեան ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան անդամներ՝ Տեարք ճորճ Զօրպաճեան եւ Թորոս Բէչեճեան:

### **OPENING OF THE HOMENETMEN "KEVORK ANDONIAN" HALL**

The official opening and naming of the "Kevork Andonian" Hall of the new Homenetmen headquarters will take place on the afternoon of Sunday, October 31<sup>st</sup>.

Pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian will represent the Prelate and convey his blessings.

Executive Council members Mr. George Chorbajian and Mr. Toros Kejjian will also be in attendance.

\*\*\*